



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

### Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

### About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

ԱԶԱՏ ՄԱՍԵՆԱՀԱՐ

թիվ 6

# ՀԱՅԳՈՅՑ

ԱՅԻԱՐԱՆՔ  
ՀԱՅՈՑ ԱՇԽԱՌՀԻՆ

ԳՐԵՑ ԿԻ ԱՇԽԱՌՀԱԳՈՒԹԵՅ

ԽՐԻՍԵԱՆ ՀԱՅՐԻԿ

32р.

ՀՐԱՏԱՐԱԿԻԱ

Ա. Խ. Պ. ԶԱՐԴԱՐԵԱՆ ԵՎ ԱԼԻՔ

3417

Ա. ՊՈԼԻԱ

ՏՊԱ.Կ. Յ. ԱՌԱՋՈՒՐԵԱՆ

1908

Տե՛ս, Տէր, զի նեղեալ եմ. ոսկերք իմ խռովեցան,  
միրա իմ գելաւ յիս և ես գտայ դառնացեալ. արտա-  
քուստ անժառանգեաց զիս սուր, որպէս և մահ 'ի ներ-  
քուստ:

Լուարո՛ւք, լուարո՛ւք զայս՝ զի ես հեծեմ, հառա-  
չեմ և ոչ է որ միտիթարէ զիս, ... ո'վ Տէր, դու-  
արարեր զօրն զայն և դու կոչեցեր զժամանակն զայն,  
եւ եղեւ ինձ վայ վայ:

Ձե՛զ ասեմ, ձե՛զ ասեմ, ո'վ անցաւորք ճանապար-  
հաց. դարձայք՝ հայեցարուք և տեսէք թէ իցե՞ն երբէք  
ցաւք ըստ ցաւոց լեալ՝ որք 'ի իմ հասին . . . :

Ողբ Երեմիայի Ա. Գլ.

# ՀԱՅԳՈՅԺ



Ա Ն Խ Ա Ր Ա Ն Ք

## ՀԱՅՈՅ ԱՇԽԱՐԴԻՆ



ՈՂԲԱՌ գքեզ, Հայոց աշխարհ, զի քո կեանք ողբերգութիւնն է. ամեն դար և ժամանակ երբ աղէտներ զքեզ պատեցին, դու միւտ աղէտներուդ հետ մի ողբերգու ծնար. քո առաջին ողբերգուն Մոլսէս Խորենացին է, որ հազար երկերիւր ամ յառաջ ուժգին ողբաց զքեզ, մինչ վերացաւ գլխէդ Արշակունի թագ, մինչ ջախջախեցաւ իշխանութիւնդ դաւազան, նսեմայաւ քո փառք, կորեւաւ ազատութիւնդ, և դու տիրական բարձրութենէդ խոնարհելով իջեր ծառայական՝ իստրկութիւն. դու որ քան զիհւսիսականս վեհագոյն կը դնէիր քո դահը:

Յայն օրէն անկար դու ուժգնապէս երբ խօլամիտ նախարարք զԱրշակունի թագն դաւեցին, երբ Վեստ Սարդիս և մասնիչ Կիրակոս՝ Անուոյ աղատ բանալին նենգութեամբ Յունական կայսրութեան յանձնեցին.

17

My mean may like, carnosicos q.  
Armenia 1821  
May goya h ashtkharank mayats...  
Թիմ 6


ՀԱՅԱՍՏԱՆԻ



ԱՇԽԱՐԱՆՔ

## ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻՒՆ

## ԳՐԵՑ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԳՈՒԺԵՑ



ЗАЛЬФЕ В. ПУЛЬСОВСКИЙ

• 1908

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

Grand

Lila

Flower

Flowers



# ԱՌ ՈՂԲԱԿԻՑԴԻ ԻՄ ՀԱՅՈՅ ՀԱՅՐԵՆԵԱՑ

Մտերիմ հայրենակից

Պ. Համբարձում Անեմեան

Դու մինչ կայտառ ու ծաղկահարակ երիտաշ  
սարդ ես՝ հրճուանք և ուրախութիւն կր սիրես,  
Երգ և հարսանեաց պար կր սիրես, ո՞հ, ես զքեզ  
յողը և 'ի լազ կր հրաւիրեմ Հայոց աշխարհին  
վերայ. կր ճանաչեմ ազնիւ ոգիդ շոր թէ՝ 'ի  
խինդ և թէ՛ 'ի լազ միապէս զգալուն եք այդ  
եւս մի նշանակ կր համարիմ ես՝ թէ ոգիդ կեն-  
դանի է, և դու Հայուն անդգայ զաւակիչն :  
Հայոց աշխարհ կուլայ, ես և դու թիւզանդիոնէն  
ինչպէս 'ի մօտոյ կր լսենք նոցա կոծն ու կանան,  
պէտք է լալակից ու վշտակից լինինք, զի նոյն  
հայրենեաց պանդուխտ որդիքներն եմք :

Գիտես դու և կր լիշես թէ անցեալ տարւոյն  
'ի վերջ՝ ես զվանվան ԳՈՅԹՈՅՎ ողբացի, մինչ թա-  
գուցեալ կրակն միայն զվան վառեց. այդ կրա-  
կին հետ արիւն և այլ սոսկալի աղէտներ չկալին,  
այլ միայն վանեցւոց կեանք և ստացուածք հուր  
ճարակելով մոխիր դարձուց : Եւ ի՞նչ պէտք էր  
սուր և արիւն . միթէ ժողովուրդն իւր չքաւո-  
րութենէն ինքնին անարիւն և անսուր չի՞ չքա-  
նար :

Յո՛ւշ բեր, վասպուրական գաւառի շինական  
ժողովրդոց յորդոր կը կարդայի, որ վանայ կրա-

կին վերայ ջուր լեցնեն, և օգնեն դժբաղդ  
վանեցւոց. ես չէի գիտեր և չէի գուշակեր որ  
վանայ կրակէն յետոյ պիտի ելնէր ուրիշ պա-  
տուհասիչ Մարակիան կրակ մր. որ քան զմաքելօ՛  
նի բողն ծաւալելով բոլոր վասպուրական աշ-  
խարհն գժոխային հրով ծախէր, Հայոց գեղերն  
ու աւաններ քանդէր և աւերէր, Բագրեւանդայ  
դաւառի ժողովուրդ. իսպառ կոտորէր. Հայոց  
աշխարհի վաճքեր, եկեղեցիներ և ամեն նուիրա-  
կան վարեր պղծէր և ապականէր. Հայոց տնաշ-  
սէր կիներ, գեղադէմ հարսներ և կոյսեր գաղա-  
նալին վայրագութեամբ լիկէր, և յատն եւս ա-  
փրցտակելով գերեվարէր, և այլ անլուր անօրի-  
նակ ոճիրներ գործէր և աճռելի աղէտներ բերէր  
Հայոց աշխարհին վերայ :

Վասն այդորի՞ն ես արդ մոռզաւ զվան և րգ-  
վլանգոթմն . արդ կ'սկսիմ ՀԱՅԳՈՒԹԾՈՎՍ ողալ  
մեր հայուննեաց համատարած աղէտներ, դորս  
վայրագ խուժերուն ձեռքէն կրեց Հայոց անտէր  
ժողովուրդ։ Ցաւ է ինձ որ բաւական չեղայ Վաս-  
պուրական աշխարհին, բարձր Հայոց, Բասենոյ,  
Բագրեւանդայ դաւառին և Մշոյ աշխարհին ար-  
դի վերահաս յարեաց հազար բիւր աղէտներուն  
նկարագիրը բովանդակ հանել։ Միթէ հնա՞ր է,  
որ միայն հոգւով տեսնեմ կամ գուժատու լրե-  
րով չափեմ մեր հայրեննեաց նորաքանդ աւե-  
րակներ :

Ա.յլ ինչպէս բղձակաթ կը լինէր Վահան Գողթ-  
նացին մինչ Բարիլօնի գերութեան շղթայն կաշ-  
կանդել էր զինքն, նա կը գոչէր և կը պաղատէր

առ Ամիրապետն . «ԱՐՉԱԿԵՑԼԻ՞Ք ՈՐ ՏԵՍԱՆԵՄ  
ԶՈՐՉԱՓՈՒԹԻՒՆ , ԱԼԵՐԱՆՌՈՅՆ ԵՐԿՐԻՆ ԻՄՊԸ  
ՀԱՅՐԵՆԵԱՑ » . Ո՞հ , ես էլ նոյն բղջով կը փափա-  
դիմ . որ միանգամ արձակվիմ այս պանդխտու-  
թեան շղթայէն , երթամ ոտքովս շրջիմ և աչքովս  
տեսնեմ մեր աւերած աշխարհ , և թէ լամ՝ թող  
արտասուքս այն կարմիր հողոյն վերայ կաթի .  
ուր կոտորուեցան Հայեր և ուր թափեցաւ ան-  
մեղ մանուկներուն և անրիծ կոյսերուն արիւնը :  
Եւ դու ինձ հետ գոյէ , որ սիրահար ես հայրենի  
ազատութեան : Ո՞վ անպարտ զոհերու հրաշա-  
գործ արիւն , արդեօք Հայոց մեռեալ ու մօխա-  
րացեալ հողերուն նոր կենդանութիւն պիտի  
տա՞ս :

Զվարանինք սակայն և ողբերով չյուսահա-  
տինք . Երկնից գթութեան և ողորմութեան հոյ-  
սանքներ անսպառ են . այն որ Երբեմն Բարիլօնի  
դայտին մէջ ցրուած անյոյս ժողովուրդին ցամ-  
քած ոսկորներուն վերայ ցօղեց և իսկոյն գերեզ-  
մանի դայտավայրը կենդանութեամբ կանաչա-  
ցաւ , որ մի եւս Երկինք այդ կենդանարար ցօղ  
Հայոց դաշտերուն վերայ կը ցօղէ . դու կը տես-  
նես թէ ի՞նչպէս Հայոց աշխարհն եւս կը վերածնի  
հրայիւք : Միայն թէ մեք աննկուն արիութեամբ  
գործենք և Աստուած մեր օգնականն է :

Իսկ դու , աղիւր բարեկամ , իմ փոքրիկ Եր-  
կոյս փոքրիկ Մեկենաս , դարձեալ ձեր անուան  
կը նուիրեմ ՀԱՅԴԱՅԹԺՈ որ Հայոց աշխարհի աշ-  
խարանքն է , ինչպէս արդէն նուիրեցի մի դուզ-  
նաքեալ Երկս , որ վերտառութիւնն էր ԺԱՄԱ-  
ՆԱԿ ԵՒ ԽՈՐՀՈՒՄԴ ԻՒԹ :

Դու այժմիկ փռթո՛ և աս՛ք չԱՅՆՈՅԺ աս՛կր  
մամալին. թող մամույն եւս իւր աղաս թեւե.  
բազ առնի առյ աշխարհին :

Ես գիտեմ, այն աղդ և աշխարհ որ Հոյ չէ՝  
մեղ հետ չի լոր. այ մեղ չէ պէտք օտարին լոց.  
բաւական է որ թէ՛ առաջնորհիկ գողթական  
Հոյեր, և թէ՛ Բագանդիսնի պանդուխո Հոյեր  
յիշեն մեր հայրենեաց չորչորեալ որդիքներ  
և լոն :

Ես գիտեմ և գու գիտես թէ սսակ լոբզ ու  
ողբերազ եթէ շողախենք մեր հայրենեաց հող՝  
հայրենիք ախնախը. Սորո համար թերեւս սմանք  
որ չոր ու անզայ սիրս սնին. զիս մազողելով  
բամբառեն թէ երիմետանը մի լոլկան մանակ է  
գործեր կամ թէ միշտ աւերակատէր բու :

Սակայն ես կը պասախանեմնոցա՝ որ այդ-  
պէս կը կարծեն. թող այդ ծեր իմաստան և  
հանճարեղ շինողներ անլոց և անկած շինեն մեր  
հայրենիք, և կամ նորս լոցող որդիքներան  
որտոսուքը ծիծաղով որբեն. Ես յայնժամ կը  
թողամ գուժերս և ողբերս, կ'սկսիմ միայն ու-  
րախութեան երդ նուոգել :

Ամէն աշխարհ և ժամանակ իւր ծիծաղ և  
լոցն ամի. ո՞վ է այն՝ որ իւր հարսանիք իշն-  
դամզ և դարերդութեամբ չկասարեր. ո՞վ է  
այն՝ որ իւր մեռեալը սւանց կոծոյ և լույ կը  
թողէ :

Այժմիկ Հոյոց աշխարհի կետեք և ժամանակ  
լոց է. Հոյոց առնը՝ ոգոյ առն է և իւր հան-  
գէսը մեռելոց հանգէս է. Պէսք է որեմ լոնք

վշտակցինք քանի որ մեր հայրենեաց որդիքներ  
կուլան. և նոքա որ կուլան՝ մեր հայրեր, մեր  
մայրեր, մեր եղբայրներ, մեր քոյրեր, մեր սի-  
րելիներ և մեր բարեկամներն են :

Երանի՛ թէ ազատ շնչով, ազատ ձայնով և  
ազատ գրչով լայինք. ո՞հ, մանուկ քան զմեզ  
աղատ է և ազատաբար կուլայ. մեք հեղձամըղ-  
ձուկ լինելով կուլանք . և դու դիտես որ մեր  
աշխարհին մէջ լացն եւս ազատութիւն չունի :

Լանք ապա և բարձրաձայն ազագակենք. թէ  
մեր լալոյ ձայնին աշխարհ խուլ լինի ու չոէ,  
հաւատանք թէ երկինք անշօւյտ կը լսէ. և Ասա-  
ռած իւր բարերար ձեռքով կը սրբէ Հայոց աշ-  
խարհի լացն. արագ կը բերէ մեր փրկութեան  
և ազատութեան օր. և այն օրն է ահա, որ կը  
խայտան և կը ցնծան մեր հայրենեաց որդիքներ.  
յայնժամ մեք եւս Մովսիսի քրոջ Մարիամու-  
թմբուկն մեր ձեռքն տանելով՝ հետ նոցա կ'եր-  
գեմք և կը պարեմք . «Օրհնեացուք զՑէր, զի  
փառօք է փառաւորեալ : »

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

ՏԵ՛Ա, ՏԵՐ, զի նեղեալ եմ. ոսկերք իմ խռովեցան,  
սիրտ իմ գելաւ յիս և ես գտայ դառնացեալ. արտա-  
քուստ անժառանգեաց զիս ոռւր, որպէս և մահ ՚ի ներ-  
քուստ:

Լուարո՛ւք, լուարո՛ւք զայս՝ զի ես հեծեմ, հառա-  
շեմ և ոչ ոք է որ միախթարէ զիս, ... ո՛վ ՏԵՐ, դու  
արարեր զօրն զայն և դու կոչեցեր զժամանակն զայն,  
եւ եղեւ ինձ վայ վայ:

ԶԵ՛Պ ասեմ, ձե՛զ ասեմ, ո՛վ անցաւորք ճանապար-  
հաց. գարձայք՝ հայեցարուք և տեսէք թէ իցե՞ն երբէք  
ցաւք ըստ ցաւոց լեալ՝ որք ՚ի իմ հասին...:

Ողբ Երեմիայի Ա. Գլ.

# ՀԱՅԳՈՅԺ



Ա Յ Խ Ա Ր Ա Ն Ք

## ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐԴԻՆ



ՈՂԲԱՌՄ զքեղ, Հայոց աշխարհ, զի քո կեանք ողբերգութիւն է. այսն դար և ժամանակ երբ աղէտներ զքեղ պատեցին, դու միւտ աղէտներուդ հետ մի ողբերգու ծնար. քո առաջին ողբերգուն Մովսէս Խորենացին է, որ հաղար երկերիւր ամ յառաջ ուժգին ողբաց զքեղ, մինչ վերացաւ գլխէդ Արշակունի թագ, մինչ ջախջախեցաւ իշխանութեանդ դաւազան, նսեմայաւ քո փառք, կորեաւ ազատութիւնդ, և դու տիրական բարձրութենէդ խանարհելով իջեր ծառայական ՚ի սարկութիւն. դու որ քան զհիւսիսականս վեհագոյն կը դնէիր քո դահը:

Յայն օրէն անկար դու ուժգնապէս երբ խօլամիտ նախարարք զիրշակունի թագն դաւեցին, երբ Վեստ Սարգիս և մասնիչ Կիրակոս՝ Անուոյ ազատ բանալին նենգութեամք Յունական կայսրութեան յանձնեցին.

այսուհետև թէեւ դու մի գիւերողոյս առաջի նման։  
Կե թողդ Հայկազնց զերեզմանէն ծագեցաւ։ յան-  
կործ ողօսապէս փոլեցաւ Հաւրօսեան լերանց գը-  
լուխ, ո՞հ, այդ քա իրիկուան վերջուայսն էր որ Լուսի-  
նեան կեւանին հետ արևուն զես 'ի մոր մասու։ յայն  
օրէն Հայոց տուղ ծանկեցաւ օսոր զերեզմանին մէջ  
և այլ եւս չծագեցաւ։

Յայն օրէն վերջի թուշին հետ մռաւ քո ամեն յօյ-  
և հայրենի ազատութիւն։ յայն օրէն մինչեւ ցայսօր վեց  
գարեր անցան, զես ո՛չ լրացաւ քո սորչութեան և  
տառապանաց ժամանակ, այլ տառապ նք 'ի վերոյ տո-  
ւապանաց միշտ հասին 'ի վերոյ քո չուռին քեզ մի  
հանդիսա ժամանակ, որ պահ մի չուն տանէիր և հանդ-  
չէիր մաշած ու թողկացած կեանքիդ մէջ։

Թողումք Յայն, Պարսիկ և Արաբաւին. լընկթիմուր,  
Շոհապաս և այլ հիւսիսային բորբարոս աղջեր ժանկց-  
անգամ արշաւեցին, քանդեցին, հողարլուր գործուցին  
ամուր ոմուր քաղաքներդ, խրամատեցին բալոր այզե-  
ցնիերդ, զքեզ ճռաքող արարէն կայսառ որդիքներդ  
մինչեւ 'ի կուժասասան և Շահասասան գերի վարեցին։

Օրնեալ ես դու, Հայոց աշխարհ։ որչոփ քանդող  
թշնամոյն ձեռք կը չանար զքեզ իւպառ ճռաքող առ-  
նել և որթերդ յարմատէն յօտել, զու անդրէն նոր նոր  
ուռեր տալով կը բողբոջէիր։ Հաւատո՞ դու, Հայոց ոշ-  
խարհ, թէ Աստուծոյ օրհնութիւնն էր ո՞ միշտ անտ-  
պական պահեց քո ձիռերդ։ զի զու Քրիստո՞ի ճշմա-  
րիս որթին վերոյ հաստատուած ես։

Բայց գործեալ ողբամ զքեզ, անտերո՛ւնջ ժողովարդ  
Հայոց։ զի քո մնացորդ ձիռեր անխնայ ճմեց ժանա-  
և ժողիրն Քիւրա. ոորա համար չու կեանք՝ թէ՛ առաջին  
և թէ՛ վերջին, միշտ ողբերգութեանը յի է։ Մովսէս չէ  
միայն որ զքեզ կ'ողբայ. և լիիւն, Դաղարիկ, Լասափ-  
վերտղին, Մեծոփեցին, Առաքել պատմագիր, այս ամէն

իրենց ժամանակին մէջ զքեզ ողբացին, Ո՞հ, ևս էլ քո ողբերգուն եմ. երանք թէ յետինն լինէի, և այլ եւս չծնէր քեզ ողբերգու. այլ եւս անպահապան այգիդ ճռաքաղ չինէր. երթայր և այլ եւս չդառնայր անդրէն քո տառապանաց տարին և ժամանակ:

Բայց դարձաւ և բարկութեամբ դարձաւ, երբ Արեւ-  
մտեան քաղաքակրծութիւն Արեւելքը կ'ողջունէր, երբ  
Թուրքաստան Սահմանադրութիւն կը հրատարակէր, երբ  
պանծացող տասնեւիններորդ դարը՝ գիտութիւն, լոյս,  
ազատութիւն և ազգաց իրաւունքներ կը քարոզէր, և  
երբ դու ինքնավար Սահմանադրութիւն ունէիր, կը  
հրճուէր յուսով նորաքայլ յառաջդիմութեանդ մէջ:

Իրեւ սրաթեւ արծուի, իրեւ ճախրաթեւ բազէ  
յանկարծ հասաւ ու դարձաւ քո վերայ տառապանացդ  
օր. սեւ օր, սեւ գիշեր էր այն. և իրեւ ծննդական  
մօր՝ ցաւոց երկունք զքեզ ըմբռնեց. դու արդ կը հեծես  
և ճիչ կը բառնաս. յոյսդ՝ երկունաց մէջ է. կամ կը  
ծնիս ողջամբ ՚ի նոր յազատութիւն, և կամ կը մեռնիս  
այդ մահացու վերքերովդ. անէ՛ծք այն ձեռաց, որ քո  
հանգստարանի գերեզման կը կնքէ թէ այլ եւս ո՛չ դոյ  
Հայն ու Հայաստան:

Ի՞նչ անքախտ և թշուառ ես դու, մա՛յր, թէ մեռ-  
նիս այժմիկ. երբ ուրիշ մայրեր և ազգեր ՚ի նոր կեանս  
կը վերածնին. քո կեանք՝ քառասուն դար է. Յունա-  
կան կրակէն, Պարսկական կրակէն, Արարացւոց կրա-  
կէն, Թաթարներու կրակէն ողջ անցար, անհօւն անհա-  
մար զոհեր տուիր, որգէս զի մնացորդ որդիքներովդ  
ապրիս. և արդ ապիկար և վատազգի Քիւրտին կրակով  
պիտի այրիս և սպառիս:

Մինչ հիւսիս հարաւին դէմ ՚ի մարտ կ'ոքոտար,  
Հայոց լեռներու հին աւազակներն ՚ի զէն կը կոչուէին.  
այդ բանը՝ նոցա համար մի բախտ և պատեհ ժամ էի՛:  
Նոքա որ սովորած էին առանց քրտանց վաստակէ՛ զիւ-

դական ժողովուրդին ճակատի քրտանց հացն ուտել, միշտ աւարով ու յափշտակութեամբ ապրիլ, իրաւունք համարնցին իրենց համար ամեն բռնօւթիւն, ամեն եղեռն և ոճիր՝ ի գործ դնել քրիստոնեայ ժողովուրդին վերայ, և այնչափ անվախ ու անկասկած կը գործէին չարիքներ, որպէս թէ երկրն անիշխան էր, ոչ իրաւունք կար, ոչ դատաւոր, ոչ դատաստան:

Մարախի ու թրթուրի նման թափեցան, Հայոց գիւղեր և դաշտեր ծածկեցին, մի խուն ժամանակի մէջ ամեն կանանչութիւն կերան ու չորցուցին, այն չէն չէն գեղեր և աւաններ անապատ դարձուցին։ Միթէ զիւտե՞նք՝ ի սկզբանէ անտի ըր այդ ազգին ձեռք միշտ քանդող է, երբէք շինել չգիտէ. ևս էլ չգիտեմ թէ ինչո՞ւ համար է որ երկրին իշխանութիւն այդ աշխարհաքանդ ձեռք կարձել չուղեր։

Եւ ո՞յք էին Քիւրտերու անկարգ հրոսակներուն վարիչ և առաջնորդ. — նոցա մոլեկրօն դենպեաներն էին, որոց ոզիներ՝ ի բնէ անտի ոխութեամբ լցուած կը զայրանային Հայոց ժողովուրդին դէմ. մանաւանդ երբ կը լսէին և կը հաւատային իսկ թէ այս պատերազմ յանուն Քրիստոնէից ազատութեան կը մղէ հիւսիսային Պետութիւն։

Ես գիտեմ ու կը ճանաչեմ զՔիւրտն, զիտեմ թէ նա ինքնին ոչինչ գործ և զօրութիւն չունի. այդ անդէպ պատճառաւ քներ՝ ի բաց թողունք։ Այս՝ դենպեաներու կրօնամոլութեան հուրը կը վառէր զիրենք. այլ ի՞նչ հուր էր այն, որ՝ ի ներքուստ զդենպեաներ կը վառէր։

Ո՞հ, մի՛ կրկտեր այդ հուրը, զրի՛չ իմ, զրի՛չ իմ. կը բորբոքի և զգեղ կ'այրէ. թող այրէ, թող ալրէ, և աճիւնս երթայ խառնուի Հայոց այրած ժողովուրդի աճիւնին հետ։

Տէրութիւն զՔիւրան 'ի զէն կը կոչէ . և ո՞վ իրաւունք ունի մեղաղբել զինքն . զի Քիւրտն իր դաւանակից ժողովուրդն է՝ առանց գրի և Գուրանի , և քան զՀայն բիւր անդամ յարգի :

Այլ միթէ զինուոր անթոշակ կը զինուորի՞ . Քիւրտին հացն ու թոշակ ի՞նչ էր զինուրող ձեռքէն . — ոչինչ . այլ միայն այս բան «Դնացէ՛ք եւ ձեր թոշակն ու հաց ձեր ձեռքով հոգացէք» : Եւ ուստի՞ . — Հայոց գեղերէն ու ժողովուրդէն :

Այս անարդար դատաստանին մէջ Քիւրտ կ'արդարանայ Աւետարանին ու Գուրանին առաջ . եւ ես նմա իրաւուք կուտայի , եթէ Քիւրտն միայն իւր պէտքեր հողար , հիւրաբար վարուէր , դիւղացւոց հացն ուտէր . թէ հեծեել էր , ձիոյ դարման խնդրէր , ելնէր և ուղղակի 'ի բանակ երթար :

Քիւրտն այսպէս չվարուեցաւ . և այնպիսի սոսկալի խժդութիւններ գործեց նա , որ աշխարհի պատմութեան մէջ ոչ գրիչ գրեց , ոչ բերան խօսեց և ոչ մարդոյ ականջ լսեց :

Կ'ասեն թէ Լէնկթիմուր Հայոց աշխարհ արիւնով լուաց . կաւագոյն էր թէ Քիւրտն ևս արիւնով լուանայր : Կ'ասեն թէ բռնաւոր Ալփասլան մի անօրինակ վրէժինդրութիւն մտարերելով՝ Անւոյ մէջ արեան աւազան մը կազմեց , Հայոց ջերմարիւն երիտասարդներ ոչխարի նման մարթելու լցոյց զայն , ու մտաւ նորա մէջ ինչպէս 'ի լոգարան , և այսպէս շիջոյց իւր սրտին դայրոյթը : Երանի թէ Քիւրտն ևս իբրեւ արիւնախանձ ընձ՝ արիւնով միայն շատանայր : Կ'ասեն թէ խորամանկ Շահապասն մինչ 'ի գերութիւն կը վարէր Այրարատայ աշխարհի որդիքներ , տասներկու հաղար հոգի Երասխին մէջ թափեց : Հազար անդամ երանի թէ Քիւրտն եւս այդպէս գործէր . Հայոց կիներ և կոյսեր նոյն Երասխայ

ծոցին մէջ թափուէին, ալիքներ առնէր տանէր ու ծածկէր նոյս առականքը :

Դատե՛ք Հայոց, բիւր երանի՛ կուտայի ձեղ թէ նոր Եահապաս մի գար զձեզ 'ի գերութիւն վարէր, և դուք երթարիք միահամուռ և կամակար թափուէիք Երասխայ գետին մէջ, գետն զձեղ գլորէր տանէր 'ի Կասպիական ծով, ծովն ձեղ գերեզման լինէր, իւր խոր անդունդին մէջ ծածկէր ձեր մարկութիւն, քան թէ կուսական արեան մէջ թաթախելով նշաւակէր զձեղ վատշուէր Քիւրաթին վայրագութիւն :

Հայոց լերանց մաերի՛մ էրէվայրիք, և դուք իսկ վայրենի՛ գաղաններ, բացէ՛ք ձեր որջեր, ցոյց տուէք ձեր մութ խորշեր, հիւրասիրեցէ՛ք Հայոց փախուցեալ կիներ և կոյսեր, որ մարդակերպ գաղաններէն փախչելով ձեր գժութեան կ'ապաստանին :

Ո՞վ հալածեալ գայլեր, դուք արդար էք, դուք իւրաւունք ունիք, երբ սովալլուկ քաղցէն ստիպեալ հաղիւ ահ ու դուզով կը համարձակիք հովուի հօտէն գաղտագողի մի ոչխար յափշտակել. ելէ՛ք այժմիկ եւ լեռներէն դիտեցէ՛ք՝ թէ ի՞նչ կը գործեն ձեր դրացի մարդագէլներ, թո՞ղ գեղացւոց ոչխարներ՝ նոցա սիրելի ընտանիք և զաւակներն ևս յափշտակեցին, սրաժանիքներով պատառեցին ու կերան Հայոց գեղանի կոյսեր :

Ո՞վ ես դու, ողորմելի՛ կին, որ մերթ խուճապելով կը փախչիս և մերթ ծունկերդ կժուաելով կը տապալիս 'ի գետին. Հէրովդէսի դահիճներ զքեզ կը վարեն. ո՛հ, երկունքդ առ երկիւղի հասեր զքեզ ըմբռներ է. սորա համար անցար մտար մեկուսի ցորենաքոյս արտին մէջ, դու ինքնին անդայեակ ծնար, դաշտի կակուղ խոտերէն

խանձարուր շինեցիր, փաթութեցիր մանկիկդ. Հգիտեմ  
թէ բերկրեցա՞ր, երբ անցաւ երկունքդ և ողջամբ ծնար:

Երիկուն էր, քո տիտուր ու սեւ սրտին հետ մութ  
զիշերն ևս եկաւ զքեզ պատեց. այլ եւս ապահով եւ-  
դար թէ քո վարիչ որսորդներ անցան. առիր նորածին  
մանուկդ՝ գնացիր մօտակայ գիւղ. մանկիկդ կուլար կաթ-  
կուզէր, և դու՝ հաց հաց կը խնդրէիր. զի քաղցին  
նուազելով կաթդ ցամքեր էր: Զգիտեմ, դժբա՛զդ կին,  
թէ այսուհետեւ ազատեցա՞ր բազէներու ճանկերէն:

Անշուշտ կ'ողբաս, կի՞ն դու, թէ թշուառ եմ, որ-  
դի ծնայ, այլ ամուսինս կորուսի. բայց դու զքեզ բախ-  
տաւոր համարէ, կի՞ն, որ վերահաս անձկութեանդ մէջ  
կարացիր ողջամբ ծնել և մանուկդ աղատել: Քան զքեզ  
անբախտ եղան այն մայրեր, որ մայրենի գրկերէն մա-  
նուկներ ձգեցին ու փախան. որպէս զի գէթ աղատեն  
իրենց անձն չարաշուք Քրդաց լլկանքէն:

Ողբա՛մ զքեզ, մանուկ մայրակորոյս. կ'ասեն թէ քո  
մայր մինչ 'ի փախուստ կը խուճապէր, մոռցաւ մայրա-  
կան սրտի գորով, ձգեց թողուց զքեզ մի վարած արտի  
ակօսին մէջ. թերեւս հաւատաց Քրիստոսի խօսքին և  
ասաց թէ մանկիկս իրեւ ցորենահատիկ մի ցանեմ հայ-  
րենի հողին մէջ, թող մեռնի, որ բեղմնաւորի հատիկս  
բազմապատիկ ատոք ցորենով: Եւ ի՞նչ է այդ. — Հա-  
յոց աշխարհի աղատութիւն:

Զո՞րն ես պատմեմ մայրերէն ձգուած դիեցիկ մա-  
նուկներ. տեսող գտաւ ու պատմեց թէ մի մանկիկ ևս  
Եփրատայ ափանց եղէդներուն մէջ ձգուած էր, ինչպէս  
Մովսէս՝ Նեղոս գետին խաղեր: Մեր խեղճ մանուկ  
պրատւեայ մնաւուկին մէջ չէր կպրածիւթով պատած, այլ  
այնպէս բացողեայ ձգուած. խեղճ անմարը տղեկ կական  
բառնալով կուլար: Լաեց մի դիւզական աղջիկ, որ նա  
ևս կը թագուցանէր զինքն գետեղը մացառներու մէջ,

սիրտ արաց, ձայնի հետ գնաց գտաւ ընկեցիկ մանուկն. դիւզացի քաջ աղջիկ, որ դեռ մայր չէր եղեր, մայրենի գորովով խաղապահեցաւ տղեկին վերայ. ինչոքս Փարաւոնի դուստր՝ առաւ ասրաւ մերձակայ գիւղ մի, ասաց թէ Եփրատին եղերք շամբերուն մէջ գտայ:

Զգիտեմ թէ ողջ մնացի՞ր դու, անհայր անմայր որ-  
բացեալ մանուկ. ո՞ր օտար մայր քեզջ կաթ պիտի տայ  
ու մնուցանէ, մինչ քո բուն ծնող մայրդ՝ առ նեզսւ-  
թեան ու վշտին, զքեզ անմայր թողուց: Ո՛ տառապա-  
նաց և դառնութեան օր, որ կաթոգին մայրերուն բը-  
նական գորովն ու գութ մոռնալ կուտաս և սրտէն 'ի  
բաց կը համես որգեկին սէր, որ մօր աղիքն և սրտին  
հատորիկն է:

Ողբա՛մ զձեզ, Հայո՛ց մայրեր, որ կորուսիք ձեր  
յժակից ամուսիններ և սիրական զաւակներ. թէ մեռաք՝  
երանի՛ ձեզ, թէ ողջ մնացեր էք՝ եղո՞ւկ ձեզ: Ո՛հ,  
ի՞նչ կը լինէր, որ դուք ևս այն Մշեցի դիւցազն կնոջ  
աէս զօրանայիք, ձեր վշտակրութեան և հայածանաց  
յէջ կամակար մեռնէիք կրօնի սրբութեան համար, ձեր  
զաւակաց սիրոյն համար, ձեր համեստ պատկառանաց  
համար. միթէ այժմ կապրի՞ք դուք, եւ լաւագոյն չէ՞ր  
ձեզ մեռնիլ քան այդ չարավիշտ կեանք:

Ի՞նչ անդատաստան կը խօսիս դու, հէք ողբերգու.  
իրեւ զառանցող բանդագուշ կը լինիս, կարծելով թէ  
աշխարհիս վերայ կիներ սուր և բաղուկ ունին. մինչ  
քաջաբազուկ հուժկու այրեր կը վատանան իրենց ընտա-  
նեկան պատիս մահու չափ պաշտպանելու, դու զիսես  
թէ քանի՞ դժուարին է որ տկար ու տանտիկին կիներ  
դիւցազնանան:

Այո՛, այդ գիտեմ. բայց միթէ չառաքինացա՞ն Հա-  
յոց աշխարհի կանայք ու տիկնայք. մինչ նոցա այրերը

շղթայակապ վարեցին 'ի իլուժաստան , նոքա անայր և անտերունջ մնացին , կանացի տկարութեան անտար վիշտերուն դէմ մրցեցին , Պարսկական կրակին դէմ անվառ մնացին , կրօն , հաւատ և սուրբ կեանք անարատ պահեցին . որոց չնաշխարհիկ առաքինութեան հանդէսը ճառագրելով կը հոչակէ սուրբ Եղիշէ վարդապետ :

Մո՛վսէս , Մո՛վսէս , Բագրեւանդայ վիճակին ծերունի հովիւ , դու զՀայոց աշխարհ և քո ժամանակ ողբացիր և ի հող մտար հանգչեցար . այլ եւս չգիտես թէ քո անթագ անդաւազան ստրկացեալ հայրենեացդ ողբեր դադրեցա՞ն :

Ո՛չ , ո՛չ . տասն դար անցաւ , տակաւին ողբերդ դառնապէս կը նորոգուին . դու այժմ գլուխդ գերեզմանէդ 'ի վեր առ , տես քո սիրելի հօտին վերահաս աղէտները . քանասար գայլերուն վոհմակ յարձակեցաւ , գառներդ կոտորեցին , որոց յորդահոս արիւն՝ շիրիմդ կ'ողողեն և կ'իջնան մինչեւ ի խոր տապանիդ հեծող ոսկորներդ :

Դու ինչպէս տեսնալով կ'ողբագրէիր , արդ եւս արհաւիրք անհնարինք պատերին Հայոց աշխարհ . մարտթէ 'ի ներքուստ և թէ արտաքուստ զմեզ պաշարեց , հայրենիքը թափուրացաւ , մնացորդ որդիքներուդ կէմն թողլով բնակասնունդ երկիր՝ գաղթական դնաց , կէմն եւս անխնայ կոտորուեցան սուրբ կրօնին համար և Հայոց հաւատին համար :

Եփրա՛տ , Եփրա՛տ , մկրտարա՞ն սուրբ Գրիգորի հոգեծին որդւոց , ափունքներուդ վերայ ինկած դիակները արեան հեղեղներ թաւալգոր բերելով քո ծոց կը թափին , և դու տո՛ւր ալիքներուդ՝ թող գլորէ տանի մինչեւ Ովկիանու ափունք . Հայոց աշխարհի անմոռն բողոքն է այդ : Կը լսէ՝ արդեօք և կը տեսնա՞յ աշխար-

Էի արեան հանդիսատես խաղաղասէր Լօնտօն . թէ ա՞յդ  
է շահ մեծին Անգղիոյ , որ քան զինքն յառաջ Աւետա-  
րանին հաւատացող որդիքներ տարապա՞րտ մեռնին :

Բագրեւանդայ փոքրիկ հօտին փոքրի'կ հովիւներ ,  
ո՞վ քահանայք , թէ ողջ մնացեր էք՝ առէ՛ք ժամհարներ  
հետ ձեզ , գնացէ՛ք շրջեցէք քաղաքի փողոցներ . աներ  
և տան մուլթ խորչեր որոնեցէ՛ք . շրջեցէ՛ք նաեւ գե-  
ղերու և դաշտերու մէջ , ժողվեցէ՛ք ուր և գտնէք Հա-  
յոց անթաղ մեռեներ . զի մեռելներու տէրերը թողին  
ու փախան . ծնողք փախան՝ զաւակներ թողուցին , զա-  
ւակներ փախան՝ ծնողք թողուցին . նոյնպէս անբաժան  
սիրելի ամուսիններ սէրը մոռցան , զիրեար թողուցին  
ու փախան :

Մի մի կամ ուրոյն ուրոյն գերեզման մի՛ փորէք  
այդ անտէր մեռելներուն , այլ բոլոր միահամուռ խոր  
վիճերու մէջ թաղեցէք . միայն խաչքարէ նշան մի կանդ-  
նեցէք հողակարկառին վերայ . ես աստ կ'արձանադրեմ  
նոցա սուրբ և անմահ յիշատակը :

ԱԱՏ ԿԱՏՈՐԵՑԱՆ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՅ  
ԱՆՈՒԱՆ ՀԱՄԱՐ ՔԻՒՐԵՐՈՒ ԱՆՈՂՈՐՄ ՍՐԵՆ ,  
ՕՍՄԱՆԵԱՆ ՏԵՐՈՒԹԵԱՆ ՀԻՆԳ ՀԱՐԻՒՐ ՏԱՐՈՒԱՆ  
ՀԱԻԱՏԱՐԻՄ ՀԱՅԵՐ :

Փողոցէն ելէ՛ք , քա՛հանայք , մտէ՛ք այդ մերձակայ  
տան մի սենեկին մէջ , ուր երկու նոր ամուսնացելոց  
հարսնարան և առագաստն է . տեսէ՛ք , գուցէ կը ճա-  
նաչէք . թերեւս դո՛ւք պսակ դրիք ու կապեցիք այդ  
դժբաղդ գլուխները . տեսէ՛ք զոյգ համանման նորահաս  
կտրիճ ամուսիններ , երկու յծակից սիրելիները , զորս  
վայրագ Քիւրուեր միմեանց վերայ դնելով՝ ընդ գետին  
դամեր են , որ զիտես թէ ուխտերէին նոյն իսկամահ-  
ուան մէջ իրարմէ չրաժնուիլ :

Հանէ՛ք այդ արիւնոտ ցիցը, հանէ՛ք ու տարէք պահեցէք. եթէ դատ և դատաստան լինի աշխարհս մէջ, եթէ Հայուն զրկանքն եւս յիշեն երկրիս դատաւորներ և արդարութեամբ վոլսարէն հատուցանեն, յայնժամ դուք զայդ դատական ատենին մէջ բերէք, թողբողոքէ, վկայ լինի Հայոց անպարտ արեան:

Առէ՛ք նաեւ իջուցէ՛ք 'ի վայր ընդ ձող և ընդ ցից հանեալ Հայոց սօսանման երիտասարդներն. արեւ տեսաւ, լուսին տեսաւ, աստղեր տեսան, աշխարհ տեսաւ և Աստուած տեսաւ. այլ վկայ կը խնդրէք, ո'վ աշխարհի ատենակալ դատաւորներ:

Համառօտեցէ՛ք, համառօտեցէ՛ք աշխարհի խաղաղութեան դաշնագիր. համառօտեցէ՛ք ձեր երկար և պատիպատ դատաստանին վճռագիր, տեսցուք թէ Հայոց այնչափ զրկանաց, այնչափ զոհերուն և թափած արեան գինը դուք ի՞նչ կը վճռէք:

Ժամանակ, թո՛ղ այդ ցցահան դիակներ, մտիր 'ի տանտուն թոնրն սալիսուփն ի զե՛ր առ. տե՛ս, մարած մոխրին վերայ խանձողած կոճղ սի կայ, հա՞ն 'ի դուքս. մի՛ կարծեր թէ այրած հացի կուտ է այդ, այլ հացթուխ և հացարար տանտիկինն է, որ մինչ բարկ թոնրիրին շուրջ նստած անօթի Քիւրտին համար հաց կ'եփէր, ապիրատներ կերան նորա հաց, զարկին ծգեցին վառած թոնիրին մէջ ու դնացին:

Թէ գիր գիտես, ժամանար, համրէ ու գրէ թէ քանի՛ քանի Հայոց տանտիկիններ այդպէս հրայրեաց չարամահ մեռան: թոնիրներէն ելած բոլոր Հայոց կիներուն խանձողուած նշխարները, ժամանար, լի՛ց կողովը, շալակդ առ, գնա՛ մինչեւ յԵւրովպ, շո՛ւրջ ած պալատականաց դոները. տեսցուք թէ աշխարհիս այդ ողորմած թագուհիներ Հայոց այրած տանտիկիններուն համար ի՞նչ դատաստան պիտի տեսնեն:

Ո՞վ ժրագօտի ժամհարներ, թողէ՛ք յայդ թոնիրի այրածներ. փութացէ՛ք կողովներ առէք ձեր յուս՝ եւէք հնձանի դաշտ. Հայոց այգենկութիւն է. ժողովեցէ՛ք յայդ կոխոտուած մանրիկ ճիռեր, Հայոց մանուկներու նշխարներ, զորս Լէնկթիմուրի ժանտածին զաւակը սմբակակոխ կոտորեց, ու քամեց Հայկայ զաւակներու արիւնը՝ որպէս քամեն խաղողն ի հնձանին: Խսամով ժողովեցէ՛ք յայդ փոքրիկ սարաթիրուներու սուրբ և ամբիծ նշխարներ, տարէք թաղեցէ՛ք իրենց հարց ու մարց հետ. եթէ անողոք սուր զիրենք ծնազական գրկերէն բաժնեց, թող գերեզմանին մէջ ոսկերոտօք գրկախառնին:

Միթէ սերմանահան մշակ էք դուք, որ գոզնոցը կապելով այդ մատաղ ու պարարտ սերմեր կը ցանէք Եփրատայ արգաւանդ դաշտերուն մէջ:

Ցանեցէ՛ք, ցանեցէ՛ք այժմիկ և յուսով ցանեցէք. թող այդ անմահ հատիկներ մեռնին հսղին մէջ. կ'անցնի ձմեռն, կ'անցնին խստաշունչ սառնամանիք, կուգայ կենդանարար գարուն, գերեզմանի արտերդ կը կանաչին, և դուք կը հաւատաք յայնժամ Յիսուսի խօսքին, թէ «Ամէն ամէն ասեմ ձեզ, եթէ ոչ հատն ցորենոյ անկեալ յերկիր մեռանիցի՝ ինքն միայն կայ. ապա թէ մեռանիցի՝ բազում արդիւնս առնէ:»

Հնձանի դաշտին մօտ՝ այդ վարած արտերու մէջէն դառն մռնչիւնի ձայներ կու գան, կը լսէք, ժամհարներ. այդ մռնչիւն՝ մորթազերծ անասնոց մռնչիւնն է, որ հերկագործ ակօսներու մէջ ինկած կը տանչուին. վերէն արեւ կը կիզահարէ, ներքուստ գիշակեր անգղեր և ագուաւներ կտցահարելով թել թել միսեր ոսկորներէն կը քաշեն: Դանսակ մի առէք՝ կտրեցէք նոցա վիզեր, որ երթան հանգչին:

Ո՞վ սոսկալի անգթութիւն. անագորոյն Քրդեր հապճեպով հասան, մանկալներ, հօտաղներ սրակոտոր

սպանինց և թրերով կտրատեցին եղնամոլներուն էլեգումէ շշներուն հաստապինդ ջիւերը. խեղճ անասուններ տապլտկեցան ակօններու մէջ, և առանց պարանոցներ կտրելու՝ սկսան շերտ շերտ քամակներէն կաշիներ հանել. այդ անվաբտի միաչապիկ բոկոսն վայրենիք տրեխաներ շինեցին իրենց համար. որ կ'երթային երկաթէ կօշիկներուն հետ կռուիլ:

Արդա՞ր Աստուած, եթէ դու աշխարհիս վերայ յանցապարտներ՝ և մերթ եւս անմեղներ տանջելով կը լնուս ու կը կատարես արդարութեանդ չափն ու հատուցումն, միթէ անասո՞ւնքն եւս յանցապարտ են քո առաջ. այդ անողորմ ամբարշտաց աղիքներ չե՞ս կտրատեր նոցա փորին մէջ. դու որ նինուէի անասնոց խնայեցիր, այս անխօսուն հեծող անասնոց դատաստանը չե՞ս տեսներ:

Արեւն 'ի մայր մտաւ, այլ ձեզ համար հանգիստ ու դադար չկայ, կտրի՛ճ ժամհարներ. Տովբիթի նման առաքինացէ՛ք, գիշերաժամուն ելէք՝ լուսնի լուսով ժողովեցէք Հայ մարտիրոսաց նշխարներ. մայրերու գըրկէն ու կուրծքէն մի՛ բաժնէք յօշոտուած մանուկներ. մի՛ դպիք, մի՛ կը կաէք այդ արիւնշաղախ դիակներ. պատան պէտք չէ՛, կանաչ խոտերու մէջ փաթթեցէք Հայոց կանաչարեւ և ժուռամուռ մեռելներ. թէ պատառ մի՛ կտաւ կը գտնէք, կենդաննոյն մեռած Հայոց հօլսնի կիներուն և կոյսերուն տուէք, որ պատատեն իրենց առականքը. բաւ է՛ թէ այդ անտէր մեռելներ, Քրիստոսի անուան զոհեր՝ իրենց արիւնոտ շապիկներով և պատառատուն ցնցատիներով թաղէք: Թող նոցա ոգիներ երթան Երկնից մէջ պայծառազգեստ լինին:

Այլ գիտե՛մ ես, գիտե՛մ, ո՛վ Հայոց անթաղ դիակներ, ձեզ համար ոչ քահանայ կայ, ոչ ժամհար, ոչ յուղարկաւոր, ոչ սիրելի, ոչ բարեկամ. սարսուռ և

արհաւիրք ամենուրեք տիրսկր է, ո՞վ կը համարձակի կատարել ձեր խաղման հանդէսը: Ո՞ն, ո՞ն, Հայոց որդիքներ, հող ու դաշտ շատ ունէիք, գետնի երես դուք անհող, անծածկոյթ մնացիք, երկնից խռչուններ և երկրի շուներ ժողովեցան՝ կերան ձեր մարմին, կրծեցին ձեր ոսկորներ. Մինչ ողջ էիք՝ բռնութիւն զձեղ կեղեց ու քերթեց. և մեռնելէն յետոյ՝ թերեւս ասացիք թէ աղատուեցանք տառապանքէն, հանգչինք հողին մէջ. ո'չ, ո'չ, հանգստեան հող չտուին ձեզ. զի նոյն անողոք բռնութիւն՝ ձեր անշշունչ դիակներն ևս հարստահարեց:

Ո՞վ՝ Լուսին Լուսին, Հայոց աշխարհէն կուղաս, Բազրիւանդայ կոտորածի դաշտերէն անցա՞ր. այնպէս կը թուի որ զիշերաժամուն մէջ շառաւիղներդ արիւնոտ դիակներու վերայ զարնելով՝ երեսդ շառագուներ է: Մի՛ անցնիր ճեպով. պահ մի կա՛ց Բիւզանդիոնի հորիզոնին վերայ, պանդուխտ Հայերուն լո՛ւր տուր Հայոց աշխարհէն. լո՛ւր տուր մեր թշուառ ընտանիքներէն, ո՞վ մնուաւ, ո՞վ մնաց, ո՞վ գերեց ու և ո՞վ թողուց հայրենիք՝ գաղթական գնաց: Թողուց իւր հասած հունձեր, թողուց իւր հօտն ու նախիր, թողուց իւր կեանքն և ամենայն ինչ: Մերկ, կողոպուտ գնաց. ասաց թէ՝ անցնիմ այս կարմիր ծովէն և միանգամ ազատիմ չարշարանաց աշխարհէն:

Ո՞վ՝ Լուսին Լուսին, Մասիսի գագաթէն անցա՞ր, զաշերդ շուրջ ածի՞ր, Սրագածի ոտքը՝ եշտիածնայ պարսպին տակ թափտծ Հայոց գաղթական ժողովուրդն տեսա՞ր որպէս յաշնանավերջին ծառերէն թափուած դեղնած տերեւներ. դիտեցի՞ր նոցա ապաժոյժ վիճակ. տեսա՞ր այն գետնի վերայ նուազած ու թալկացած մայրեր, որոց ցամքած կուրծ քերէն կախուեր էին դիեցիկ մանուկներ. նոքա կական բառնալով կաթ կը խնդրէին և մայրեր զհաց:

Ո՞վ Հայր ու Հայրապետ Հայոց, իջմիածնայ վեհաբանի լուսամուտէն կը դիտէ՞ք դէպ ՚ի թագրեւանդայ կուսարածի դաշտ, թէ կ'առէք հեռու է աչքէս և կարճ է իմ ձեռքս. ուրեմն թողէ՞ք մեռելոց դաշտը՝ դարձուցէ՞ք ձեր աչքը գաղթական ժողովուրդին վերայ, որ կենդանւոյն մեռած ու թաւալած են իջմիածնայ պարփակներուն տակ: Է՞ջ այտի, դու ինքնին հայրական գորովովդ մատակարար եղիր. դոքա սուրբ Գրիգորի մնացորդ որդիքներն են. տե՛ս, ի՞նչպէս մերկ, կապուտ կողոպուտ, անի՞չ անստացուած ձեր հայրական գիրկ դիմեր են, հաց կ'ուզեն, հանդերձ կ'ուզեն, հանդըստարան կ'ուզեն. ժողովէ՛, պատսպարէ՛ զիրենք Այրարատայ ծոցին մէջ: Դոքա Եփրատայ ակներէն և Նպատ լեռնէն կու գան, Երասխէն, Արագածէն և Մասիսէն պայտպանութիւն կը խնդրեն, ո՛հ, չգիտեմ թէ կը դտնե՞ն՝ թէ յուսով կը թափառին:

Ո՞վ իմ լրացեալ Լուսին, Վասպուրական աշխարհի Ազրակու գաւառէն անցա՞ր, և ի՞նչ տեսար. ես քան զքեզ յառաջ գիտեմ այդ, դու պատմէ՛ մեզ: Պարոկական Քրդաց հրոսակներ յարձակեցան, աւարեցին տարան բոլոր Հայոց գեղեր: Անձարակ ժողովուրդ երբ մերկացաւ իւր կեանքէն և գոյքէն, չուարեցաւ մնաց. ասաց թէ ուր երթամ, ուր ապաստանիմ, գէթ հոգիս ազատեմ. երկու կը սկին մէջ մնացի և կը խորովիմ: Ո՞հ, ակամայ ընտրեց նա թողուլ քաղցր հայրենիք՝ գաղթական երթալ, կամովին ձգել զինքն Պարսկական հին կրակին մէջ, որ երբեմն մեր աշխարհ և մեր նախնիքներ վառեց ու մոխիր դարձուց:

Բա՛րդուղիմէ, Բա՛րդուղիմէ, Հայոց նախկին լո՛յս ու լուսաւարիչ, ո՞ւր ես. տարա՞ն, տարա՞ն քո փոքրիկ հօտն ու ժողովուրդ, որ քո հովանեաց տակ և գերեզմանիդ շաւրջ կը բնակէր: Կողովտեցին ու ք անդ եցին հազարամեայ հնաշէն վանքդ. այդ բաւական չէր, յան-

դգնեցան պիղծ ձեռքեր փորել ու կրկտել հազար սւթ հարիւր տարուան կնքուած տապանդ . այդ յիմար և ապիրատ ազգ կարծեց որ գերեզմանդ գանձերով լի է կամ սուրբ ոսկորներդ ոսկի դարձեր են :

Այլ եւս ինչ որ գիտես ու տեսար, պատմէ՛ մեզ, ո՞վ լուսին, Հայոց աշխարհի ցաւեր և աղէտներ մեզմէ մի՛ ծածկեր : Կ'ասեն թէ մեր հաւատոյ ոսոխն ու թըշնամին . . . երբ Բագրեւանդայ կոտորածէն յետս կը դառնար, գեղեցիկ կիներ ու կոյսեր բնտրելով առաւ տարաւ իւր բանակին հետ . տարաւ փակեց Խիզանու գաւառին մէջ, ուր այդ չարաշուք գազանին որջն է . ուր 'ի սկզբանէ անտի սովորած էր միշտ Աւետարանի հօտէն հանել ու խառնել իւր գունդերուն հետ :

Լէնկթիմուրի գերեզմանի որդերէն ծնած ո՞վ չարաձնի սողուն, կրծելով կրծեցիր Հայու միօն ու ոսկոր, օձանման սողալով մտար Հայոց դրախտը, ամէն ծաղիկներ և կանաչ բոյսեր պղծելով ապականեցիր, չարչարեցիր Աստուծոյ խոնարհ ժողովուրդ, և ասացիր դու ինքնին թէ՝ ո՞չ կը տեսնայ և ո՞չ 'ի միտ կ'առնու Յակովբայ և Գրիգորի պաշտեալ Աստուած :

Իմացի՛ր, իմացի՛ր, ո՞վ ամիտ և անդգամ, թէ արդար դատաւորն Աստուած իւր ծառայներուն վրէժինդիր է, և նոցա անպարտ արիւն պիտի խնդրէ քու ձեռքէն . կը մեռնիս և 'ի դժոխս կ'իշնաս . նոյն գերեզմանի որդունք՝ յորմէ ծնար դու, և զքեղ պիտի ուտեն ու կրծեն . պիտի փորին սրաժանի ատամունքներդ, զորս կը կրծտէր հաւատացեալ ծառայներուն վերայ :

Ո՞հ, Հայո՛ց աշխարհ, ո՞հ, աղէտներդ անբաւ անկշիռ են, զորս կրեցիր դու այս նոր լէնկթիմուրի ձեռքէն, Ես ուշամոռաց եղայ և չգիտեմ թէ զո՞րն ողբառմանդուած գեղե՞րդ ողբամ, վարատեալ ժողովո՞ւրդդ

ողբամ, յի սարշահ ՚ի ձօր թափառական ընտանիքնե՞րդ ողբամ, հայրենիքէն վարեալ գաղթական որդիքնե՞րդ ողբամ, յափշտակեալ կիներդ և կոյսե՞րդ ողբամ, քանդաւած վանքերդ և պղծեալ տաճարնե՞րդ ողբամ, անհաց, անապրուստ, անճարակ ու թշուառ կեանքդ ողբամ, վաստակաւոր մշակնե՞րդ ողբամ, որ բարդ ՚ի բարդ հնձուեցան ու որայի նման փռուեցան արտերուդ մէջ, որոց արեան ցնցուղներ ցայտեցին և կարմիր ներկուեցան ցորենի հասկեր և հատիկներ :

Պահ մի կերէ՞ք այդ արիւնու հաց ու յագեցէք դուք՝ որ երկրագործ ժողովուրդը կոտորեցիք, վաստակաւոր եզնամոլներ մորթեցիք, հողագործին խոփն ու հարօր և սայլեր ջախջախեցիք, ոչխարաց հօտերը լեռներէն աւարեցիք, կաթնարար տանտիկինները կամ մեռուցիք կամ փախուցիք. ինչ որ արդիւնարեր էր երկրին և տէրութեան շահ, ինչ որ ձեր անշահ և անվասակ կեանքին առատ հացն ու սեղանն էր, դուք զայն ամեն ձեր ձեռքով կօրծանեցիք. կարծեցիք թէ ուրիշներու կեանքը կ'սպաննէք ու կ'սպառէք, բայց դուք ինքնին անձնասպան եղաք ու չիմացաք :

Տեսցուք այսուհետեւ թէ ուստի պիտի յագենայք, երբ մշակ ժողովուրդին կեանքն և ոյժը ջլատեցիք. նոքա որ մեռան, հողն իրենց հանգիստ գտան ու ազատուեցան առուապանքէն. օ՛ն և օ՛ն արասցէ Աստուած՝ եթէ դուք առանց հողի և մշակի՝ ողջ մնայք երկրիս վերայ:

Ո՛չ միայն կշտապինդ կերայք, այլ և խեղճ գեղացւոյն կեանքը անխողճապէս կողոպաեցիք, ոչ ինչ չթողիք. թէ շտեմարանին մէջ մի գոր ցորեան կար, թէ իւղամաննեն մէջ մի կշիռ իւղ, թէ մառանին մէջ փոքր ինչ պաշար՝ որ իւր տղոց բաժին ու հոգեպահիկն էր, զայն ամէն հանիք թափեցիք ՚ի դուրս, աղբիւներու մէջ խառնեցիք, որպէս զի գիւղացի ընտանիք սովալլուկ

մեռնին. բայց միթէ դուք պիտի մնայք ու ապրիք, ժա՞նա խորամանկներ :

Ո՞հ, որչափ իղձ կը լինիմ ես, և ո՞ տալր ինձ, Հայոց աշխարհ, որ ողբերուս հետ սփոփանք խառնելով զքեզ մխիթարէի և սրբէի լացող ժողովուրդիդ գետահոս արտասուքը, զոր թափեց նա իւր արեան հետ : Բայց ես էլ կը վարանիմ Մարգարէին պէս և կը գոչեմ, « Ո՞վ մխիթարեացէ զքեզ, դո՞ւստր Սիօնի, զի ծանրացաւ բաժակ բեկման քո » :

Այո՛, կարի յոյժ դառնացաւ քո բաժակ, Հայո՛ց աշխարհ։ չգիտեմ թէ ո՞րպէս յուսադիր լինիմ ու մխիթարեմ զքեզ. զի ես էլ քո տարաբազդ որդիքներէն անմխիթար մի զաւակն եմ, որ բախտն ինձ միշտ լալ վիճակեց ու երբէք չխնդացի : Եւ ի՞նչպէս խնդայ քո հէք ողբերգուն, երբ քո կեանք՝ ողբոց ու ցաւոց աշխարհան է :

Այլ մխիթարեա՛ց, մխիթարեա՛ց, Մա՛յր Հայաստան, զի դու սսվորած ես ցաւեր ու վիշտեր կրել. հազար անգամ մահաբեր երկունքներ զքեզ ըմբռնեցին և դու հանդուրժելով անցուցիր երկունքներդ և ողջ մնացիր : Հազար բիւր աղէտներ տեսար, միշտ որդիքներդ գըրկէդ վարատեցան, բայց դու երբէք չվճառեցար, զի, որդիդ պողպատի նման պինդ և աննկուն է : Հազար անգամ գերեզմանին դռւար հասար, թշնամիներդ տեսան՝ ծափ զարկին, թէ վա՛շ, մեռաւ Մայր Հայաստան, և դու անդրէն Ղազարոսի նման վերածնոր գերեզմանէն :

Միթէ մարդոյն կամ օտարին ձեռք կարսղ է զքեզ մեռաւցանել, երբ դու ինքնաստան չը լիսիս, և երբ լոյսդ անմահամբեամբ լի է : Թէ խորամանկութիւն կը հդիմ որդիքներդ ընկնել, որչափ հնար է՝ հարստահոքել

ու վարատել, որպէս զի դու անբարգաւած մնաս, անձեռ սպառիս, կամ այդ վերահաս թշուառութեանդ մէջ բոլորսվին չքաւորիս, նկուն դառնաս, ոգիդ սորրկանայ և երբէք աղատութիւն չմտարերես;

Թէ աշխարհիս խորամանկութիւն քեզ համար այսպիսի գաւ կը նիւթէ, դու եւս փորձառութեամբ ուսոի՛ր, խորագէ՛տ եղիր, այնպէ՛ս անցիր դաւերէն՝ որն զքեզ չտեսնայ գարանամուտն. յուշի՛կ անցիր գնա՛յառաջդիմութեանդ մէջ. մի՛ գուեր, մի՛ աղաղակեր. թէ կը խօսիս, թէ կը գործես, լոին և անձայն եղիր:

Մի՛ վհատիր, ժո՛ղովուրդ, թէ զքեզ չարչարելով խօսարհ արարին, ոտքիդ առաջ որոգայթներ լարեցին. դու հաւատ ունիս, Աւետարան ունիս, խաչակրութիւն սւխտեր ես, կոխի՛ր, անցի՛ր Բարիլօնի կրակը, թող տեմնան ու զարմանան աշխարհի որդիքներ:

Այս աշխարհ և աշխարհիս գահեր՝ ամեն գայթագութիւն և որոգայթներ ունին, խեղճ և ստրուկ ժողովուրդներ բռնաբարուած են և կը գոչին աղատութիւն աղատութիւն: Այլ ոչինչ ճար չունին, դորա միակ աղատութեան ճար՝ լոյս և կրթութիւնն է. դու զայն երբ՝ ի ճեռս բերես, այն օր է միայն քո աղատութեան տօնահանդէս:

Ո՛վ Բագրեւանդայ դժբաղդ որդիքներ, վայրագ խօսմն զձեզ կատորէց, վատ և ապիկար Քիւրդն ժողովեց տարաւ զձեզ 'ի սպանդանոց, դանակը առաւ և միահամաւու մորթեց զձեզ, կաղինով ձեր ոսկորներ ջարդեց, դուք անխօս՝ տնմուռնչ՝ անշարժ մնացիք, որպէս ոչխար՝ իւր կարիին առաջ:

Անխնայ մորթուեցայք, այլ եւս պիտի մորթուիք. այս աշխարհիս օրէնք, կարգ ու խղճմտանք այսպէս է.

մարդիկ՝ որ տէր են և կ'իշխեն՝ անասնոց, ոյխարի նման՝ մարդիկներէն պիտի մորթուլին, երբ չունին խեթիչ եղջիւր, որ ցուլի նման ոգորին իրենց կարիչներուն դէմ:

Յո՞ւշ, յո՞ւշ, ո՞վ կոտորուած գառներ, ո՞վ Հայոց ողջ ու մնացորդ որդիքներ, դեռ պիտի կօտորուիք, դեռ պիտի մորթուիք ադ չքոտի Քիւրդերէն, քանի որ անզէն, անեղջիւր, անասպար կ'ապրիք. դուք մարդ եք, ձեռք և բաղուկ ունիք. միթէ անզգացած մեռն' է ձեր որամտութեան ոգին. միթէ կը հաւատա՞յք որ իշխանութեան աչքը հասնի մինչեւ Հայոց ամայի լեռներ ու դաշտեր և ձեղ պահապան իինի:

Ես գիտեմ ու կը տեսնամ զքեզ, որ իբրեւ մի անյարիր անդամալոյժ՝ Պրովատիկէ աւազանին չուրցն ի կած, անոք, անօգնական մնացեր ես. ո՛հ, հիւանդաւթեանդ շրջանը չէ թէ երեսուն և ութ ամ է, այլ չորեքհարիւր ամ, անդամներդ ամեն բեկրեկուած, ոտաքէդ մինչեւ 'ի գլուխդ վէրքերով լցուած, մարդ չի' հաւատար թէ դու ալլ եւս կ'ողջանաս ու կը շրջիս աշխարհիս վերայ. ոգիդ կենդանի է ու կը տրոփայ, շունչ մի ունիս, որ շարունակ կ'աղաղակես ու կը պսղատիս, Տէ՛ր, ես անոք եմ և չունիմ ինձ օգնական, որ զիս ազատութեան աւազանին մէջ ձգէ և ես բժշկուիմ այս չարախտ և չարաշուք ստրկութենէն:

Գոչէ՛, գոչէ՛, ո՞վ անճարակ հիւանդ, քո օգնական՝ Տէրն է. աշխարհիս վերայ քեզ ոչ ոք օգնական չկայ: Դու Պուլկար չես, որ Օրթոտօքս եկեղեցւոյ Զարր քեզ զօրավիր հասնի. Կաթոլիկ չես, որ Հռովմ կամ Ֆռանսան զքեզ պաշտպանէ. Բողոքական չես, որ սուրբերութերիսութիւն թողուս և Ովկիանու Թագուհին քեզ բարեխօս բռնես, որ թերեւս գթայ և դարման տանի. զի դու Հայաստանեայց եկեղեցւոյ աղատ զաւակն ես, իբրեւ անծանօթ՝ մոռացեալ երկրի մէջ կը բնակիս.

սորա՞ն համար արդեօք մարդոց սրտէն ու մարդասիրուշ  
թենէն մոռցուած ես դու :

Մատի՛ր, ո՛վ Յիսուս, մատի՛ր, հիւանդ և անկեալ  
Հայուն օգնական չկայ աշխարհիս վերայ, մատի՛ր, ձե՛ռն  
տուր այդ հինորեայ անդամալուծին, որոյ բաղմապատիկ  
ցաւոց ու վիրաց վերայ այլ եւս անհնարին ցաւս ու  
վարս յաւելին այժմիկ : Ասա՛, ո՛վ ազատարար քժիշկ  
և փրկիչ, թէ արի՛, ա՛ռ զմահիճս քո և՝ թէ յազա-  
տութիւն :

Ո՛վ դու մաշած և հիւծած հիւանդ, թէ յիրաւի՛  
թժկութիւն կը ժանես, թէ ստոր ազատութեան կը  
ցանկաս, օ՞ն ուրեմն, փոքր ինչ խլրտի՛ր մահճիդ մէջէն .  
ինքնաշա՞րժ եղիր, անաւասիկ Աստուծոյ մատն ու հրեշ-  
տակ աշխարհիս յեղափոխութեան աւազանին ջուրերը  
կը յուղեն . ով որ զինքն վաղ ձգէ նորա մէջ, նա միայն  
իւր ցաւերէն ազատ կը լինի :

Թէ՞ չգիտես, Ի՞նս՝ իբրեւ դաս՝ խօսիմ՝ քեզ, որ դու  
խելամտիս թէ քանի՞ թանգ է ազատութեան դին  
աշխարհիս Փրկիչ զայն իւր խաչով և՝ արիւն ով՝ գնեց՝  
նոյնգունակ մեր նախնի քայեր Եկեղեցւոյ և Հայրենեաց  
աղատութիւն մահով և արիւնով գնեցին : Միթէ դու  
ցանկալի աղատութիւն առանց զոհի և արեան ձրի  
ստանալ կ'ուղես :

Թո՛ղ, թո՛ղ որ դարձեալ ողբամ զքեղ, Հայո՛ց աշ-  
խարհ և ժողովուրդ . մինչ աշխարհիս ջրայուղման և ար-  
եան ալիքներուն մէջ՞այլ և այլ ազգեր կը լողան աղա-  
տութեան նաւահանդիսաւ գտնել, դու ալեաց ելեւէջնե-  
րու . մէջ՞կը տատանիս : գիշերալոյս փարուներ չունիս, նա-  
ւահանդի՞ստ, նաւահանդի՞ստ, կ'որոնես և չես գտներ :  
Այդ յայտնի է, թէ դեռ անարուեստ ես, լողալ չգիտես :

Թո՛ղ ուրեմն՝ այժմիկ աղատութիւն, միայն խաղա-  
ղութիւն խնդրէ, դեռ քեզ համար ուսումն և կրթու-  
թիւն պէտք են, և՝ դու այդ քո տատանման մէջ Պետ-

բոսի նման ձեռքերդ Յիսուսի կարկառէ և տաս . Տէ՛ր  
քո ձեռն տուր՝ զիս փրկէ . եթէ թօղուս ու չփրկես , Տէ՛՛  
ես կը կորնչիմ աւասիկ :

Յուշ կ'առնեմ քեզ , Տէր , մինչ մի նուագ Տիբերական  
ծով կ'ալեկոնձէր , դու 'ի խելս նաւուն անխռով կը նըն-  
ջէիր , ձայն տուին քեզ աշակերտներդ , զարթի՛ր ասա-  
ցին , Տէ՛ր , զարթի՛ր , զի կորնչիմք աւասիկ :

Ո՛վ դու անքուն պահապան աշխարհի , որպէս թէ  
չէիր զիտեր և չէիր յսեր ծովալիքներուն ձայն , ելար  
յանդիմանեցիր նոցա թերահաւատութիւն , մռնչով ծով  
լսեց քո ձայն ու հանդարտեցաւ և դարձաւ 'ի խոր խտ-  
ղաղութիւն :

Միթէ և այէժ կը ննջե՞ս դու երկնից գահուդ վե-  
րայ , և երկիր՝ որ ոտքիդ պատուանդան է , կը սասանի  
ու կ'երերայ . պատերազմի դաշտերէն կրուրի անեղ  
թնդանօթներ կ'որոտան , հրալից գնտակներ կը թա-  
փին , մի նուն վայրկենի մէջ ժողովուրդի կոյտառ զւակ-  
ներ բարդ 'ի բարդ որայի նման մահուան աղարակներու  
մէջ կը թօթափին , և դու չե՞ս տեսնար և չե՞ս իմանար :

Հայեա'ց և տես , ո՛վ Տէր , թէ ի՞նչպէս Սպիտակ և  
Անը ծովերու կատաղի կոնակներ զերեար կը բաղխեն ,  
հիւսիս և հարաւ հակառակ հողմերով փոթորիկներ կը  
հանեն , երկուստեք սեւ սեւ ամպեր կ'որոտան , բար-  
կճայթ կարկուաններ կը թափին , աշխարհիս մարդկու-  
թեան ծառերն ու ծառասատաններն ջարդուելով լինու-  
լով տապալեցան 'ի գետին :

Երբ այս ծովեր կը խովին ու ցամաքն եւս արեան  
ալիքներով կը ծփայ . ի՞նչ կը խորհի և կը զործէ խա-  
ղաղական Ովկիանոս . — Ներքուստ միայն կը մռնչէ նա և  
ուրիշ ոչինչ . իւր խուլ և անորոշ ձայնէն միայն այս կը  
լսեմք , որ կ'ասէ . գնացէ՛ք կուտեցէք . ի՞նձ ոչինչ է  
փոյթ . միայն թէ հեռա՛ւ հեռո՛ւ , իմ շահուս մի՛ դոդիք ,  
ասպա թէ ոչ և ես կը յուղուիմ :

Ո'վկիանէ , Ո'վկիանէ , որ կը [պարծիս]թէ ամեն ծովեն մեծ և հարուստ եմ , որ կը քարոզես թէ մարդասէր եմ , խաղաղութիւն կը սիրեմ , Սւետարան կը սիրեմ , և յաճախ կը կարդաս Յիսուսի այս բան « Երանի խաղաղաբարաց , զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին . » :

Երկնից աչք կը տեսնայ , գիտէ և կը քննէ քո խոր երիկամունք . իսկ աշխարհի առաջ չքմոզալինելով ստէպ ստէպ յայտարարեցիր , թէ տքնեցայ ու շանացի որ խաղաղութիւն հաստատեմ , բայց ընդունայն համարեցաւ իմ ջանք . ձեռքս լուացի և ասացի թէ քաւեալ եմ ես այդ պատերազմի արենէն , և գու սառն աչքով կը դիտես այտի այժմ արեան դաշտին վերայ :

Ո'վ գահերու դաստաւոր Աստուծ , կը տեսնաս դու , Արեւելեան խնդիր մի կայ աշխարհիս վերայ , որ Գորդեան հանգուց դարձեր է . այս քանի՝ ամէ , որ այդ խնդիրը աշխարհները կը խռովէ , ժողովրդոց խաղաղութիւնը կը բառնայ . Եւրոպիոյ գահերէն ու դիւանագէտք չկամեցան կամ չկարացին լուծել զայն , զոր հին դիւցազն Աղեքսանդր մի հարուածով ընդմէջ կտրելով լուծեց այդ հանգուցը :

Իսկ նորն ասաց , 'ի բա՛ց կացէք , ձեռնամուխ մի՛ լինիք , այդ խնդիրն իմ բաժին և իրաւունքն է , թողէք ես միայնակ կը լուծեմ զայն : Զարնելով զարնելով բազուկներ պարտասեցան . կ'ասեն թէ սուրն եւս բթացաւ , և հանգուցը դեռ անլուծանելի մնաց :

Ո'վ դժոխային կնծիռ , որ մարդկանց արիւնով կը մածանիս և քա՛նի երթաս՝ կը կնծուիս , թշուառ ժողովուդներ որչա՞փ զոհեր տուին և որչա՞փ արիւն թափեցին քեզ համար : Թէ լուծուիս՝ Պուլկարիոյ արեան զին աղասութիւն կը խոստանաս , այլ կը մոռնաս ու բնաւ չես յիշեր Հայոց անապարտ արիւն և իւր տուած անհուն զոհեր :

Ո'վ Երկնից արդարութիւն , մարդկանց վրկութիւն ընդունայն է , սուրդ երկայնմասութեան պատենէն հա՛ն ,

դու միանգամ հա՛ր լուծէ՛ յայս յաւիտենական հանգուըը, որ աշխարհիս վերայ գայթակղութիւն մի դարձեր է. վայ նոցա՝ բոց ձեռքով այս աշխարհաքանդ գայթակղութիւն կու գայ:

Դու կը տեսնաս, երբ գահեր կոիւ ուզեն՝ Արեւելեան խնդիր կը յուզեն՝ և երբ աշխարհակալել կամին՝ դարձեալ Արեւելեան խնդիր կը հանեն: Մինչեւ յե՞րբ գահեր թողուն մարդկութեան վայելուչ խօսք, խորհուրդ և ուխտ, որով և արիւնով խօսին. մինչեւ յե՞րբ զօրաւորներ կուռին՝ տկար և անզօր ազգեր ոտքի տակ ճըմլուին, պատերազմի արշաւանքներու առաջ խեղճ ժողովուրդ աշխարհաքանդ ու տնաքանդ լինի:

Նեղեալ, տառապեալ, զրկեալ, հարստահարեալ, կոտորեալ, վարատեալ, չքաւորեալ և յուսահատեալ ժողովուրդ՝ ճնշող երկաթին տակ կը հեծէ, կ'աղաղակէ և կ'օրհնէ քո մնուն, ո՛վ Տէր, տո՛ւր մեզ քո մշտնջենաւոր խաղաղութիւն:

Ասա՛ թող հանդարտին խոռվեալ ծովեր, ասա՛ թող կարին կրուրի թնդանօթի ձայներ, ասա՛ գահերուն թող սուրերն ՚ի պատեան դնեն: Ես դիտեմ, նոքա ո՛չ կը կարդան և ո՛չ քո բան ՚ի միտ կ'առնուն, թէ «Որ սուր առնու, որով անկանիցի»:

Տէ՛ր, դու դիտէիր կանխաւ, որ աշխարհ և գահերն զմեզ կը չարչարեն. սորա համար ասացիր որ ազօթենք և միայն քո արքայութիւն խնդրենք: Մարդիկ անդիտանալով՝ Սաւուղ, Սաւուղ կը խնդրեն:

Այլ քո ճշմարիտ հաւատացեալներ պէտք է յամենայն ժամ այս խնդրեն. Եկեսցէ արքայութիւն քո, որ է ճշմարիտ խաղաղութիւն, սէր և հաւասար եղբայրսիւրութիւն, և քո բարի կամքն այն է որ մարդիկ այս որպայմանով ապրին աշխարհիս վերայ:

